



ԿԱՂՈՒՅՑ ԳՈՐԳԸ

ՏԱԶԻԿԱԿԱՆ ՀԵՔՅԱԹ



ՆԵՏ ԴՐԱՏ

1939 թ.

891.55
9-74

- 6 NOV 2011

891.515

9-74

uy

Կ Ա Պ Ո Ւ Յ Տ Գ Ո Ր Գ Ը

(Տաղիկական հեփյաթ)


Վերապատմեց Ա.Ն.ՆԱ. ԳՈԼԴԲԵՐԴ

Քարգմ. Մ. ԴՈՒՐԳՍՐՅԱՆ

Նկարները՝ Հ. ԻՍՍԲԵԿՑՆԻ

Պ Ե Տ Յ Ր Ա Տ

ՀԼԿՅԵՄ ԿԿ ԿԻՑ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ
ՅԵՐԵՎԱՆ 1939



Հին ժամանակ մի ղշաղում¹⁾ ապրում էր մի գեխկան² Ռահիմ անունով: Նա շատ աղքատ էր. վնչ հող ուներ, վնչ ջուր: Նրա ունեցածը միայն ծղոտե մի հին տնակ ու մի կապույտ գորգ էր: Ռահիմն աշխատում էր բալի³ մոտ, հողն էր քեթմենով⁴ փորում, ցորեն էր ցանում և սրա համար որական յերեք լավաշ ու մի կճուճ ջուր էր ստանում: Յեվ գրանով ապրում էր նա իր կնոջ ու աղջկա հետ: Չնայած աղքատ էյին, բայց հաշտ ու համերաշխ էյին ապրում: Յերեկոները նստում էյին իրենց դռանը, հիանում էյին իրենց կապույտ գորգով: Ամբողջ ղշաղում այդպիսի գորգ չկար: Գորգի վրա գործած էյին մանիշակազույն քաղաքներ, կանաչ այգիներ, փիրուզե յերկինք ու կապույտ աստղեր: Ռահիմն այս գորգն ստացել էր մորից, վորն ստացել էր նույնպես իր մորից, սա էլ—իբր մորից: Ասում էյին վոր այդ գորգը գործել է Ռահիմի տատի-տատի տատը նրա վրա աշխատելով յերիտասարդ տարիքից մինչև մահը:


Մեռնելու ժամանակ նա ասել է.

— Լավ պահեցեք, զավակներս, այս գորգը: Ում տան



1575
39

¹⁾ Գյուղ:
² Ջրավոր գյուղացի, մշակ:
³⁾ Հարուստ գյուղացի, հողատեր, կալվածատեր:
⁴⁾ Յերկրագործական գործիք (բրիչ):



պատին վոր կախված լինի այս գորգը, նրան խողաղություն
ու բախտավորություն կբերի:

Յեւ Ռահիմը սիրում, պահում ու պահպանում էր
գորգը: Բայց մի անգամ բայը, լսելով գորգի մասին, Ռա-

հիմին իր մոտ կանչեց.

— Տուր ինձ այդ գորգը, — ասաց նա:

Ռահիմը մտածեց ու պատասխանեց.

— Ինչպէս կարող եմ իմ բախտը քեզ տալ, և ինչի՞դ
է պետք: Դու ամեն ինչ ունես — հողին ել եքոնը, շուրն ել,
փոշխարներն ել: Իսկ յես միայն մի գորգ ունես: Չէ, իմ
գորգը քեզ չեմ տալ:

Բայը բարկացավ և ասանից դուրս վռնդեց Ռահիմին:

Այդ որվանից Ռահիմն որեցոր ավելի ու ավելի քիչ
էր բայից հաց ու շուր ստանում՝ տուն բերելու: Նրա
տանը սով առաջացավ:

Այն ժամանակ Ռահիմի կինը վերցրեց քեթմենը և
մարդու հետ միասին գնացին բայի դաշտում աշխատելու:
Մշտատում էյին նրանք վաղ առավոտից մինչև գիշեր,
բայց դրա փոխարեն ստացած հացն ավելի ու ավելի յեր
քչանում:

Ռահիմի փոքրիկ աղջիկն էլ քեթմենը վերցրեց ու
դաշտ գնաց: Յերեքով տանջվում էյին բայի ծանր աշխա-
տանքի տակ, բայց բայն ավելի յեր գոռում նրանց վրա
և կերակրում էր նրանց շների կերի մնացորդով:

Նրանց միակ ուրախությունը կապույտ գորգն էր:

Մի անգամ, յերբ ուտելու բան չուներին, Ռահիմը
միտք էր անում: Մտածեց, մտածեց ու մյուս որը դաշտ
գնաց:

— Լսիր, դաշտ, ասաց նա: — Այս — յես եմ, Ռահիմը:
Դու ինձ վաղուց ես ճանաչում: Ամեն տարի քեզ փորել
եմ քեթմենով: Խնդրում եմ մի քիչ հող տուր ինձ:

Դաշտը հառաչեց ու ասաց.

— Յես ուրախությամբ կողնեյի քեզ, բայց բայը, իմ
տերը, կիմանա և կբարկանա ինձ վրա: Լավ է՝ շուտ հեռա-
նաս այստեղից:

— Բայց Ռահիմը չլսեց: Նա յերկու պարկ լցրեց հողով

և իր տունը տարավ: Հողը թափեց տան առաջ ու գնաց ցորենի մոտ:

— Լսիր, ցորեն, ասաց նա,— դու ինձ վաղուց ես ճանաչում: Յե՛վ յես ել քեզ եմ ճանաչում: Այս—յես եմ, վոր քեզ ցանեցի գարնանը: Ինձ մի քիչ հատիկ տուր, յես ուզում եմ իմ փոքրիկ արտը ցանել:

Յորենը վախեցած որորեց իր հասկերն ու կամացուկ ասաց.

— Սո՛ւս, սո՛ւս, թե չե՛ք բայը կլսի: Լավ ե՛ շուտով հեռանաս այստեղից:

Բայց Ռահիմը չլսեց նրան: Յերկու փունջ հասկ պոկեց ու տուն գնաց:

Յորենը ցանեց տան առաջ ու գիշերով առվի մոտ գնաց.

— Լսիր, առվակ,— ասաց նա,— յես քեզ վաղուց եմ ճանաչում, դու յե՛լ—ինձ: Այդ յես եմ քո ջրերը բայի տուն տանում: Մի քիչ ջուր տուր ինձ—տանեմ իմ փոքրիկ արտը ջրեմ:

Բայց առուն բարձր ձայնով քչքչաց.

— Որենքով իմ ջուրը բային ե պատկանում, լավ ե հեռացիր, թե չե՛ք իմ տերը կտեսնի քեզ:

Բայց Ռահիմը չլսեց. ջրով լցրեց յերկու կճուճ ու տուն տարավ: Նա ջրեց իր արտն ու բերքի յեր սպասում:

Յերկու լուսին¹ դեռ չեք բոլորել, վոր Ռահիմի դառն առջև խիտ ցորեն աճեց: Ռահիմը հավաքեց հատիկները, ծեծեց, և նրա կինը լավաշներ թխեց:

Այդ ժամանակ բայը վորոշեց շրջել իր կալվածները:

Յերբ դաշտ գնաց, մի փոս տեսավ այնտեղ: Բարկացավ ու գոռաց դաշտի վրա.

— Ո՛ւր ե այս փոսի հողը:

Դաշտը վախեցավ ու ասաց.

— Յես...յես չեմ արել...Այդ Ռահիմն եր՛ յեկավ և

ուժով խլեց մի քիչ հող:

Բայը շարունակեց իր ճանապարհը. տեսավ ցորենի արտից հասկեր են պակասում, իսկ առվի ջուրը քչացել ե:

Այդ ժամանակ բայը շարունակեց լցված գնաց Ռահիմի տունը: Իսկ այնտեղ նոր եյին հաց թխել ու բուրում եր թարմ լավաշի դուրեկան հոտը:

Դեռ վտտքը ներս չդրած, բայը գոռաց.

— Դու գողացել ես իմ հողը, ցորենն ու ջուրը: Այ, յես քեզ բանտ կնստեցնեմ: Դու իմ ցորենի հացն ես կերել: Յես քո գորգը կվերցնեմ: Յես քեզ հետ ըստ որենքի կվարվեմ:

Պատից իջեցրեց գորգն ու տարավ, իսկ ծառաները բռնեցին Ռահիմին ու բանտ նստեցրին:

Ռահիմն ինքն ել չեք իմանում—ինչքան ժամանակ քնաց բանտում: Աչքերն ել չեյին տեսնում, վտտքերը չեյին շարժվում:

Վերջապես բանտի դռները բացվեցին, և նա փողոց դուրս յեկավ: Հազիվ—հազ իր տունը հասավ ու կանգ առավ. աչքերին չեք հավատում. շուրջը թափված եյին միայն աղյուսների կտորներ:

Ռահիմը հարևանների մոտ գնաց, հարևաններն ասացին, վոր նրա կինը վշտից մեռել ե, իսկ աղջիկը գնացել ե՛ հայտնի չե թե ուր, տունն ել ամաչացել ե ու քանդվել:

Մերտը լի գայրուկով Ռահիմը բայի մոտ գնաց և նրա տանը՝ պատին տեսավ իր կապույտ գորգը: Բայի տանը յերգում եյին, ուրախություն եր ու յերջանկություն:


Ել ավելի գայրացավ Ռահիմը և կանչեց վողջ դշլաղով մեկ:

— Յերկրի վրա արդարություն չկա. թեկուզ դեռ միայն յերկու մարդ ապրեն, մեկը տեր կլինի, մյուսը՝ ծառա կդառնա, մեկը բախտավոր կլինի, մյուսն՝ անբախտ: Յե՛վ Ռահիմը վորոշեց ընդմիշտ հեռանալ մարդկանցից,

¹ Յերկու ամիս:

սարերում ապրել, վոր վոչ մի մարդու չհանդիպի:

Նա անցավ ամբողջ չերկրով, կտրեց դաշտերն ու անտառները, և բարձրացավ լեռները: Այնտեղ նա գտավ մի



քարայր, վորը բոլոր կողմերից ժայռերով եր շրջապատված: Այնտեղից յերևում եր միայն կապույտ յերկինքը և թռչունների ազատ ճախրելը:

Մնաց Ռահիմը սարերում ապրելու: Վայրի այծերը գալիս էյին ու կաթ տալիս նրան, մեղուները մեղր էյին բերում նրա քարայրը, և լեռնային արծիվն իր վորսն եր բաժանում նրա հետ:

Ռահիմը մոռացավ մարդկանց: Միայն մեկ անգամ, շատ ժամանակ անց, յերբ արդեն տարիքն առել եր նա և միրուքն արդեն ճերմակել եր, հարցրեց արծիվին.

— Ի՞նչ են անում յերկրի վրա. դեռ մարդիկ կան այնտեղ:

— Կան,— պատասխանեց արծիվը, բայց պատերազմում են ու իրար կոտորում:

Յեվ ուրախացավ Ռահիմը. նա մտածեց, վոր ուրեմն շուտով վոչ մի մարդ չի մնա յերկրի յերեսին:

Նորից տարիներ անցան: Յեվ մի առավոտ Ռահիմին արթնացրին խուլ վորոտները. քարայրի շուրջը՝ ժայռերը դողացին: Հանկարծ նրանք դղրդոցով փուլ յեկան և անդունդը թափվեցին:

Ռահիմը տեսավ մարդկանց, այդ նրանք էյին ժայռերը պայթեցնում: Չայրույթով վեր ցատկեց, վոր փախչի մարդկանցից լեռների խորքը: Հանկարծ նրա հայացքն ընկավ այն հովտին, վոր առաջ ծածկված եր ժայռերով: Այնտեղ, ուր առաջ դեղնին եր ատլիս անապատի մեռած ավազը, կապտագույն հովտում, գաշտեր ու այգիներ էյին կանաչել, սպիտակ ու կապտագույն քաղաքներ էյին բարձրացել: Ծիշտ այնպես—ինչպես հրաշալի գորգի վրա: Յեվ Ռահիմը մոռանալով իրեն, ցած վազեց, վոր ավելի մոտիկից դիտի իր գորգը:

Բայց յերբ ցած իջավ լեռներից, մտածեց.

«Այս իմ աչքին ե յերևում. առավոտյան կապույտ մշուշում յերկիրն ինձ գորգ ե թվացել»:

Բայց յերկիրն այնքան լավ եր, այգիներն այնպես եյին բուրում, դաշտերն այնպես կանաչին եյին տալիս, վոր նա առաջ շարժվեց:

Շուտով նա ծարավեց և ուզեց ջուր խմել: Այդ ժամանակ նա տեսավ մի առվակ: Դա իր ծանոթ առվակն եր, բայց ավելի խոր ու լայն:

— Յես խմել եմ ուզում,—ասաց Ռահիմը: Բայց միթե ազքատը կարող ե բայի առվից խմել: Ինձ նորից բանտ կնստեցնեն:

Բայց առվակի ջուրը ծփանքով խփեց իր ափերին և ասաց.

— Խմիր, բարի մարդ: Նոր որենքի համաձայն ջուրը պատկանում ե բոլոր ղեխկաններին... խմիր, ինչքան կուզես:

Ռահիմը զարմացավ, սակայն խմեց ու առաջ անցավ:

Շուրջը շրշում և որորվում եր ցորենը: Ռահիմն զգաց, վոր քաղցած ե:

— Յես կարող եյի հատիկ վերցնել,—ասաց նա,— բայց արտի տերն ինձ ելի բանտ կնստեցնի:

Յեվ այստեղ արտը հանկարծ շրշաց.

— Առ հատիկները, բարի մարդ: Նոր որենքով յես պատկանում եմ բոլոր ղեխկաններին:

Ռահիմը զարմացավ ու առաջ գնաց:

Նա տեսավ մի դաշտ, ուր շատ մարդիկ եյին հավաքված: Հողը սև եր, պարարտ, իսկ մարդիկ աշխատում եյին, յերգում ու ծիծաղում:

Ռահիմը զարմացավ ու հարցրեց.

— Ինչո՞ւ յեն այսպես ուրախանում: Բայի հողի վրա աշխատելը միթե հաճելի յե:

Յեվ հանկարծ դաշտը նրան ասաց.

Ըստ նոր որենքի հողը պատկանում ե բոլոր ղեխկան-

ներին, իսկ բայը—վաղուց ե վոր չկա:

Ռահիմը չհավատաց ու հարցրեց մարդկանց.

— Ո՞վ ե այս հողերի տերը:

Նրանք սկզբում չհասկացան, հետո պատասխանեցին.

— Միթե դու չգիտես: Հողի տերը—մենք ենք, բոլորս:

Ռահիմը ավելի զարմացավ և շարունակեց իր ճանապարհը:

Նա դշտը հասավ և տեսավ գորգերով զարդարված նոր տներ: Տներից մեկը բոլորից մեծ ու գեղեցիկ եր: Ռահիմը մոտ գնաց այդ տանը և տեսավ այնտեղ հավաքված յերեխաներին: Բակի մեջտեղում փռված եր կապույտ գորգ, վորի վրա խաղում եյին ամենափոքրերը: Ռահիմը ճանաչեց իր յերջանկության կապույտ գորգը:

Յերեխաները դիտում եյին գորգի վրայի նկարները, քաղաքներն ու այգիները, խոսում եյին ու զվարճանում:

Ռահիմը կանգ առավ ու յերկար ժամանակ դիտում եր յերեխաներին: Նա հիշեց իր ամբողջ կյանքը, իր փոքրիկ աղջկանը և իր ծանր աշխատանքը բայի մոտ: Հիշեց, և ինքն ել չիմացավ, թե ինչպես լաց յեղավ:

— Ինչո՞ւ յես լալիս, ծեր մարդ,—հարցրին յերեխաները:

— Յես ուրախությունից եմ լալիս,—պատասխանեց Ռահիմը:—Ինչ վոր մի բան ե պատահել մեր հին յերկրին: Ամեն ինչ փոխվել ե նրա վրա: Հողը, ջուրը, ցորենը ղեխկաններին են պատկանում, իսկ յերեխաները խաղում են յերջանկության կապույտ գորգի վրա:

Յեվ նա հարցրեց.

— Ո՞վ ե ձեզ մոտ, գյուղում, գլխավորը:

Յերեխաները տարան նրան ուղղակի բայի տունը: Ռահիմը ներս մտավ, բայց բայի փոխարեն տեսավ մի կնոջ, վորը նստած խոսում եր ղեխկանների հետ:

Ռահիմն ուշադրությամբ նայեց կնոջ դեմքին և հան-

կարծ ճանաչեց իր կորած աղջկան: Աղջիկն էլ ճանաչեց նրան, ուրախացավ ու ասաց.

— Նստիր, հայրիկ, ու իմ հյուրը դարձիր. յես հիմա կքննեմ այս դեխկանները վեճը:

Նա սկսեց խոսել ու քննել և շուտով հաշտեցրեց վիճողներին, վորոնք գոհ հեռացան:

Ծեր Ռահիմը լսում էր իր աղջկա իմաստուն խոսքերը, և այդ որը յերկրորդ անգամ լաց յեղավ:

Աղջիկը զարմացավ ու հարցրեց.

— Ինչո՞ւ յես լալիս, հայրիկ:

— Հպարտութունից,— պատասխանեց Ռահիմը: Ո՞վ կարող էր մտածել, վոր կինը, չքավորի աղջիկը, կարող է վորևէ տեղ գլխավոր դառնալ:

— Նոր որենքով,— ասաց աղջիկը,— ամեն մարդ, վորին դեխկանները վստահում են, կարող է գլխավոր դառնալ:

Այդ ժամանակ Ռահիմը վեր կացավ աշխուժով ու հարցրեց.

— Ի՞նչ որենք ե դա և վճրտեղից ե հայտնվել այն:

Աղջիկը վոչինչ չասաց, բռնեց նրա ձեռքից ու տուն առաջնորդեց:

Նա փռեց գորգերը, բերեց գինով լի սափորները, սեղանին դրեց կաթսան՝ փլավով լի, խորտիկեր՝ տապակած վոչխարենուց, և սեխ, և խաղող, և հասած նոններ: Բերեց նաև սպիտակ լավաշներ: Ապա Ռահիմի աղջիկը տնետուն ման յեկավ ու հյուրը կանչեց գյուղի բոլոր դեխկաններին: Յեկան ծերերն ու յերիտասարդները, աղամարդիկ ու կանայք, և աղջիկը նստեցրեց նրանց գորգի վրա, հոր շուրջը: Նրանք ուտում, խմում ելին և վողջունում Ռահիմին: Իսկ նրանցից մեկը, նշանավոր աշուղը, խփեց դուժարի¹ լարերին ու յերգեց:

¹Յերածշտական լարային գործիք:

Նա յեգեց ազատության կովի մասին, դաժան պայքարի մասին, անմահ Հենինի մասին:

Ռահիմը լսում էր և հանկարծ իր առջև տեսավ յերկիրը ծխի ու կրակի մեջ, իսկ իր աղջկանն, իր գյուղի դեխկաններին և շատ ուրիշ մարդկանց— կովի դաշտում: Նրանք կովում ելին, մեռնում, ու հաղթում ելին թշնամուն: Իսկ թշնամիների մեջ Ռահիմը տեսավ հին բային:

Ապա ծուխը չբացավ, կրակը հանգավ, և յերկրի վրա սկսեցին աշխատել ազատ մարդիկ: Յե՛վ տեսավ Ռահիմը, ինչպես կանաչեցին դաշտերը, ինչպես ծաղկեցին այգիները, բարձրացան կապտադույն քաղաքները:

— Յե՛վ այլպես մարդկանց նոր որենք ավին, — վերջացրեց իր յերգն աշուղը:

Յե՛վ Ռահիմն արտասվեց այդ որը յերրորդ անգամ:

— Ինչո՞ւ յես լալիս,— հարցրին նրան դեխկանները:

Յես լալիս եմ ամոթից, վոր այս տարիներին յես ձեզ հետ չեմ յեղել,— պատասխանեց Ռահիմը: Բայց ասացեք ինձ, խնդրում եմ, ո՞վ էր այն մեծերից մեծը, վոր մարդկանց նոր որենք ավեց յերկրի վրա:

Դու իրավիցի յես, հայր,— ասաց աղջիկը Ռահիմին: Մեծերից մեծը յերկրի վրա նոր որենք ավեց մարդկանց

Յե՛վ նրա անունն է — Ս Տ Ա Ն Ի Ն:



Խմբագիր՝ Հր. Քոչար
Տեխ. խմբագիր՝ Ան. Գասպարյան
Սրբագրիչ՝ Ա. Արզաբանյան

Չլափիտի լրագ՝ Վ. 2115 Հրատ. № 4202

Պատկեր 176. Տիրած 4000

Քուղթ 62×94 Տղաղբ. 2/3 մամ.

Մեկ մամ. 24480 նիշ.

Հանձնված է արտադրության 15 փետրվարի, 1938 թ.

Ատորագրված է տպագրության համար 19 մարտի 1939 թ.

ՀՀ Ազգային գրադարան



NL0395016

ФНУР 60 ч.

201

2417

ГОЛУБОЙ КОВЁР
ГИЗ АРМ ССР ЕРЕВАН